Պարսկերէն Տիւշմէ'նի սիւրքէ . և է
քար

Քար իմն՝ վսյ ասացեալ են թէ ՚ի գալ
ւառն Սողորպի լինի, և մինչ զայն ՚ի
քացախ ձգեն ՚ի դուրս ընդ ոսանու,
և ՚ի մէջ քացախոյ դադար ոչ առնու.
և վսյ սյսր պատճառի սյնմ զայս անուռն
առատրեցին. և վսյ զի օտար է և հազ
ո՛ւադիւտ, ՚ի ներկայութի թագաւորաց
ընծայ մատուցանեն.

Յազաֆս գիտութեան Հաճէ՛րի սինպաղէճի
և յաֆսութեան նրօ

Գալուի, Ի՛կի.

Եւ այն յոյժ կարծր է, որ Հէքքէք
քըն առանց այնորիկ երբէք ոչ կա
րեն առնել ինչ, և այնու զկարծր քա
րինս քերեն և ծակեն. և է մատէն նո
րին ՚ի բազում տեղիս. և եթէ Սիւն
պազէճն ոչ լինէր, ամենւին զկարծր
քարինս ՚ի բովանդակ ճէվահիրաց ոչ
կարէին ծակել և փորագրել. Եւս
սյողովատիկ երկաթոյն ջուր տո՛ւէլ, սյ
նու կարելի է քերել. և զՎիլարէք
սուսերս և զՔէնարի հինախա՛ այնու
կակղացուցանեն. և ասացեալ են թէ

բնութի նր ջերմ և ջոր է , և ՚ի յինքն
Թիւնաւօրութի գոյ , և ոյսու պատճա
ռաւ զքակտումն մասանց կարծր իրաց
կարէ առնել :

Յասկութի նր . եթէ զայն մանր լեսուն
և հարեն և ջորացուցեալ ՚ի վր նեխել
վիրաց ցանիցեն , օգուտ առնէ . և որ ոք
զԱլիւնպազէ՝ն ընդ իւր ունիցի , նմա
պղտորումն և սրտի խաղ ո՛չ լիցի :

Յազաֆս գիտութեան Հածէ՛րի Սիյնաֆն , և
յապիտութեան նր :

Գլխի , 1 .

Լյն ուն սուպակի լեսանի և հարի . և
բաղմատեսակ Սիյնա կազմեն՝ զա
նազան գունով , որոյ կանաչն քան զաման
լաւագոյն լինի . և լինի երբեմն զի զկա
նաչ Սիյնան կեղծական Օ իւմիւր
բիւտ առնեն . և ՚ի Սիյնաէ զբազում
իրս կազմեն , և ընդելուզեն . Աւ՛ի սահ
մանս Շ ամայ և Սաղորպի առաւելա
պէս յարգի ունին . և ՚ի նմանէ ՚ի դե
ղորայս աչաց և ատամանց ՚ի գործ
ածեն , օգուտ լինի :

Յաղագոս Գիտութեան Չիչնի Գործեացն , և
օգտութեան նր ։

Գլուխ , Լ Լ ։

Լ Եւ այնոքիկ են պնակ , և կուժ , և
դաւաթ , և սկաւառակ , զորս
ի կաւոյ անտի կազմեն . և զայն սնու
ցանեն . և այնպէս ասեն . զի թէ թոյն
ի վր նր ընկենուեն քիրտն ինչ ՚ի վր
այնորիկ գոյացեալ լինի . և յատկուի
նր այն է , զի զխեցի նր լեսեալ ՚ի դե
զորայս ատամանց ՚ի գործ ածեն , և
եթէ լեսել ՚ի քիթ ցանիցեն , զարիւնն
դադարեցուցանէ ։

Յաղագոս Գիտութեան Սարգաշխայի , և
յարհութեան նր ։

Գլուխ , Լ Բ ։

Օ սա Սէնի բուշայի կոչեն , և այն
բազմատեսակ է . Վախ Օ էՏէ
պի , և այն բոլորովին ոսկւոյ նմանի ,
որ ՚ի նա օծեալ իցէ . և այլ իմն տեսակ
արծաթոյ նմանի . և այնու որ ոսկւոյ
նման է , Լ ալ քարին ճիւղ տան . և ե
թէ մանր լեսեալ ՚ի վր շիքէնտար ոսկ
Բ

ւոյ հալեցելոյ ձգիցեն , զշլքէնն ՚ի
 յոսկւոյն տանի . և եթէ քանի մի ան-
 գամ սյսն առնիցեն , կերպարան նորին
 այնպէս լինի , որ ՚ի վր Սալաքարի կարի-
 ցէ լեսանիլ . և մինչ կամիցին զի ոսկին
 ՚ի բուն կերպարանն իւր գայցէ . սնդիկ
 տացեն նմա , զի ՚ի մասունս նր խառ-
 նեսցի , և ՚ի միոյ կտաւոյ քամեսցեն , և
 զսնդիկն ՚ի նմանէ անջատեսցեն , և
 ընդ ոսկւոյ հալեսցեն , ՚ի բնութն իւր
 կրկին եկեսցէ .

Յատկութի Սարգաշիսայի . ՚ի հազս և
 ՚ի դեղորայս աչաց դնեն , զլոյս տեսու-
 թէն յաւելու և մինչ քացախով օծի-
 ցեն՝ զսպիտակութն անդամոց տանի , և
 զմազն դանդուր առնէ , և թափման
 արտեանաց յոյժ բարի է , և զարմատա
 նց ամրացուցանէ , և զհերս արտեա-
 նաց՝ ՚ի սպիտականալոյ պահէ , և սա
 յամ լերինս լինի .



Յազատս գիտութեան Սաղնիսայի , և յարչս
Բեանց նր ։

Գլուխ , ԼԳ ։

Լա այն է քար իմն զոր ապակիդործք
և սկաւառակադործք ՚ի կիր ար
կանեն . ոմանց ՚ի նոցանէ ներսն դեղին
լինի , և այն է լաւագոյնն տեսակաց . և
յարմարուի նր ընդ ճէվաճիրս ապակ
ւոյ , ոպ յարմարուի Պուրէի ընդ ճէվ
Տէրի ոսկւոյն . և զապակին Տեղեղուկ
առնէ :

Յատկուի նր այն է , զի զքար մէսանէ
ին Տեղու , և զստամոքսն մաքրէ , և ՚ի
յաակուի Սարգաշիսային մօտ է :

Յազատս որսութեան Քէհուիպային , և
յարսութեան նր ։

Գլուխ , ԼԴ ։

Քէհուիպայն և ս տեսակս ունի .
և լաւագոյնն տեսակաց դեղին
և փոշուոն լինի . և զնոյն ԼԹէշի կո
չեն . և միւս տեսակին Շէմի ասեն
որոյ դեղնուին պղտոր լինի , և ՚ի յերկը
բըն Տինտիսթանի սյամ Տաւանին . և

զ' ԲէՏոխւայոյն մինչ շինեն 'ի ձեռա
մինչև ջերմ լինի՝ զխոտ և զգոր յարդի
մանբուքս, յափշտակէ. և սառու դաբա
նի յարդի խիլ:

Յազաֆս Գիտութեան Սէնտէրուսի, և յափշտ
ութեանց նք:

Գւերի, 1, 1, 0

Լուայն ուն խիժ է, դեղին զուտ և
փայլուն, և երկու տեսակ լինի.
մինն լաւագոյն, և նշան նորին այն է,
զի 'ի հուրն փութով հալի և անօսրո
նայ, և ուն Սազտաքէ լինի, և միւսն
վատթար. և նշան նորին այն է՝ զի 'ի
հրոյն յինքն գայ և ժողովի:

Յատկութի սք 'ի յատկութի ԲէՏոխ
այոյին մօտ է՝ և խիժ է 'ի ծառոյ, զոր
'ի դեղորայս 'ի գործ ածեն. Եւ ամէ
նեւին դեղ արեան, որ 'ի փողոյ 'ի վեր
գայ, կամ 'ի ստորին ճանապարհէ նստոյ
տեղւոյն երթայ, այնպէս օգտակար ոչ
իցէ ուն Սանդի արեպին. և զարիւն ուրն
կաց և վերաց դադարեցուցանէ, և ըզ
ժայթքումն արդելու. և 'ի վր ջերմ ու
սուցից կապեալ՝ օգուտ ունի. և ամ

որ որ ընդ իւր ունիցի՝ վատ աչք ՚ի նա
ոչ ներդործեսցէ :

Յաղագս գիտութեան Հաճէ՛րիւ Հայեի , և
ցարհոսութեան նր :

Գլուխ , Լ Թ :

Լ քար իմն ՚ի բովանդակ Պատգէ՛Տ
բաց , և սակաւ ինչ ՚ի գոյն մոխրոյ
հարկանէ , և ՚ի նմա գիծք գոն :

Յատկութի նր այն է , զի ՚ի վր օձա՛հա
րի կապեն՝ բժշկութի գտանէ , և թոյնն
՚ի նմանէ ՚ի դուրս գոյ և ախտի մուս
ցութի յոյժ լաւ է :

Յաղագս գիտութեան Սէ՛նի զհմէ Կարին , և
ցարհոսութեանց նր :

Գլուխ , Լ Լ :

Լ այն է քար իմն , յորոյ վր մինչ
զժուր հեղուն՝ յինքենէ կրակ բոր
բոքի . և մինչ զիւզ ձիթոյ ՚ի վր հեղուն՝
հուրն շիջանի . և Հանք նորին ոչ է
յայտ : Լալ յատկութի նր այն է , զի օձ և
կարիճ և այլ վնասակար խոյթողականք
յառաջոյ նր փախչին :

Յազատս գիտութեան Հաճէ՛րիւ էհհապի ,
և յապիութեանց նրօ

Գլուխ , ԼԼ :

Եւ է այս քար ծովային , և է բոլոր
չի ըստ չափու ընկզոյ , և ոմանք
նման ձիթոյ , որ տափարակ ևս լինի և
ի նմա սեաւ դիծք ևս քարչեալ գոն
ընդ երկայնուի և ընդ լայնուի , և ճաշ
ճանչող է . և հակումն ՚ի կապտութի
ունի :

Յատկուի նր այն է , զի զքար Սէսա
նէին հեղու , և զարիւն ստամոքսի դա
դարեցուցանէ , բայց ստամոքսին
յոյժ վատ է :

Յազատս գիտութեան Հաճէ՛րիւ Հեյնե՛ Կարե՛ն ,
և յապիութեան նր :

Գլուխ , ԼԼԹ :

Եւ այն է քար իմն դեղնագոյն , զոր
մինչ ջրով լեսուն , նման կաթին
սպիտակ լինի . և ՚ի լեզու հարեալ , սուր
համունի : Յատկուի նր այն է , զի ՚ի
ցաւս աչաց ՚ի դործ ածեն՝ զյաւել
ունած միան ՚ի բաց բառնայ :

Յազաֆո Հաճէ՛րի-տաէ՛թի, և յապիւ-թեան նի՛ր օ
որ տսի պարսիէրէն Սէ՛նիի իտան . աշտինչն շար
արեան օ

Վալու-ի , 10 օ

Օ որ մինչ լեսուն նման արեան կար
միր լինի, և լաւագոյնն տեսակաց
նորին Մաէ՛սին է . և հատք նորին ըստ
չափու հատոց Սաշի, և գունով կար
միր լինին . զոր ՚ի գեղորայս աչաց ՚ի
գործ ածեն, և ՚ի վրձ վերաց ցանեն օ

Յազաֆո գիտութեան Հաճէ՛րի-ւ գաւէրի, և
յապիւ-թեան նի՛ր օ

Վալու-ի , 10Ը օ

Օ որ պարսկերէն Սէ՛նկիմաս կոչեն օ
և Մարայն Պի-ղագի-ւ գաւէր ա
սէ . և քար մի ևս ասեն զոր (՚ի ժամա
նակի իբրև լուսինն յաճման լինի) մինչ
՚ի վրձ այսասարի կապեն՝ օդուտ ունի օ
և ծառ մի որ ոչ պտղաբերէ, մինչ ՚ի վրձ
նր կապեն, պտուղ տայ . և կին յղև ևս
տոյնգունակ : Եւ ոմանք ասեն թէ ՚ի
վրձ իւր կէտ ունի , որ ՚ի ժամանակի
աճման լուսնի , յաւելու . և ՚ի նուազ
ման՝ պակասի . և մանրագոյն լինի : և
թարգմանի քար լուսնի օ

Յաղագս գիտութեան Հաճե՛րի կերի , և
յարկութեան նր :

Վալսի , ԽԻ :

Նաճե՛րի կիրակն սպիտակ է , և բը
նուին ջուրս և չոր է . և այն ՚ի
Ծովեղերս Հինտու ծովուն լինի և
կարծր ոչ լինի : Աւ յատկութի նր այն
է զի մանր լետուն իբրև զծարիր , և
ամ կենդանւոյ որոյ ՚ի յաջս սպիտակու
թի ՚ի յայտ գոյցէ , պատճառաւ մերի
կամ ցաւոյ , մինչ քանի մի անդամ ՚ի յա
ջս այնը կենդանւոյ քարշիցեն , այն
բոլորովին փարատի : և որ զք զայն քարն
ընդ ինքեն ունիցի , զզորութի չարակնու
թե փարատէ . և երբէք կախարդութի
՚ի յունող նորին ոչ կարասցէ ներգոր
ծել . և կարծիք գոյ թէ այն քարն տե
սակ մի իցէ ՚ի Աիֆիյտմիւհրէ է :

Յաղագս գիտութեան Հաճե՛րի զլրորի , և
յարկութեան , և օգոր նր :

Վալսի , ԽՎ :

Ղգիրս յատկութեց քարանց , զոր
պատմեալ է Մ. րիսաոտել (որ թէպտ
յոյսմ ժամանակի ոչ տեսանի , բայց ՚ի
կար

Աարգի պատմութե բերեալ է) Թէ է
 նման այնմ կենդանուոյ, զոր Պուգալէ
 մուն կոչեն. զի յիւրաքանչիւր ժամու
 ՚ի յայնմ քարէ գոյն իմն այլ երևի և
 զայն քարն Վ. Ղէ. քսանդր եգիտ, և զար
 մացաւ ՚ի վ՛ր նր. զայն եբարձ և ամ
 ուրեք ուստի անցանէր պատառօղ գա
 զանք և սողունք ՚ի նմանէ փախչին.
 և նմա գիտելի եղև, Թէ յատկուի այնր
 քարի այս է: Եւ զայս քարինս ՚ի ժա
 մանակս Վ. Ղէ. քսանդրին յունաց՝ ՚ի ձե
 ուրս բերեալ են, և զօրուիք նց փորձիւ
 գիտացեալ: Եւ այն Թագաւոր եղեալ
 է՝ որ ՚ի յառաւելագոյն շէն տեղիս երկ
 րի շրջագայեալ, և զյատկուեց իրաց
 տեղեկացեալ, եթէ տիրական ազդամար
 և եթէ կերպիւ փորձոյ. և որինչ ՚ի նս
 յատկուի և ազդեցուի և օգուտ ե
 գիտ ՚ի գանձարանի իւրումեղ, և որ
 ինչ ՚ի ձեռս մարդկան է տակաւինս յայ
 նրմ մատէնէ է զոր նա ՚ի ձեռս
 բերեալ է:

Յաղագս գիտութեան Հաճե՛րէ շէպէնէ և
յարդութեան և օգտի նր՝

Վաշտի, ԽՎ՝:

Պարսկերէն ասի Սե՛նէ շէպրէնի . և
է այնքար իմն մոխրագոյն և քաղց
րահամ, զոր մինչ ջրով լեսուն՝ նման
կաթին լինի. և զայն ջուր՝ ի կապարեաց
սկաւառակի դնեն, և մինչ յաչս քար
շեն, աչաց օգուտ ունի, և զքորումն
և զվէր աչաց բժշկէ, և զքամիս յաչաց
՚ի բաց փարատէ, և ՚ի վր ջերմ ուռու
ցից եղեալ՝ օգտակար է:

Յաղագս գիտութեան Հաճե՛րէ և Գոպոսրէ՝
և յարդութեան նր՝

Վաշտի, ԽՍ՝:

Ինքար իմն՝ որ նման է փրփրոյ ծո
վու, և ՚ի գիշերի ՚ի վր ջրոյ լինի.
Յատկութի նր այն է, զի ՚ի վր գրեալ
Թղթոյ օժեն, զսևութիս ՚ի Թղթոյն տա
նի: Եւ ասացեալ են Թէ զարծաթն
քարշէ. և զատամունս սպիտակացուցա
նէ. և եթէ ՚ի տեղի մի՝ ուր մազ իցէ՝
շիւիցեն, զմազն տանի. և ՚ի վր Տին խո
ցի եղեալ, միս բուսուցանէ . և Թէ

Լեւեալ՝ երեօս այնու լուանայցեն, զե
րեսն դեղեցիկ առնէ և զնշանն
ծաղկան տանի:

Յաշագս գիտութեան Հաճէ՛րեւ պէրէպի, և
չապիութեանց նր:

Վաշտի, ԽԳ՝:

Յատկուի նր այն է, զի ՚ի քարէ աս
տի կարկուտն փախսի. և մինչ կա
միցին թէ կարկուտն զարտորայս մի՛
հարցէ, և զսերմանիս մի՛ ապականեւ
ցէ, ՚ի տեղի բարձր զայն կախեն, յայն
տեղն կարկուտ ոչ եկեացէ. և զմնաս
նր դադարեցուցանէ. և ՚ի գիրս առաջ
նոց զայս քարս Պիւզիւրիկիւհրէ
կոչեն:

Յաշագս գրախութիւն քարին որ կոչի Հաճէ՛րե
ւու, և չապիութեանց նր:

Վաշտի, ԽԽ՝:

Եւ է այն քար իմն սեաւ, յորմէ բու
րէ հոտ մկան. յատկուի նր այն է,
զի վերաց մեծամեծաց (յորմէ լաւու
թին հեռացեալ իցէ) օգտակար է. և
մինչ որ ընդ ինքեան ունիցի, ամսոյ

զուսք 'ի նմանէ փախիցեն , և վերնոյ
տու թէ ախտին լաւ է : և թարգմանի
քար մկան :

Յաշտոս որակութեան Սէ'նկի պարանին , և
յաթիութեանց ՚բ :

Գլուխ , ԽԲ :

Լաւ է այն քար իմն յայտնի , զոր
թիւրքքն Սէ'նկի թէպ կոչեն ,
և այն տեսակս ունի ըստ զանազան գու
նոց . ոմանք 'ի նոցանէ սպիտակ են հո
ղագոյն . և ոմանք կարմիր պղտորեւրանգ ,
և ոմանք խայտադոյն . և ոմանք բաղադ
րեալ յամ գունոց . և ոմանք բերել են
թէ 'ի կենդանական քարանց է , և յորո
վայնէ խողի գոյացել լինի : Բայց սառ
գապէս Սատէն սորա 'ի լերինս է , որք
'ի վերջին սահմանս նահանգացն Խէ
դայի և Գէմզաճի են . և յատկուի այ
սրք քարի այն է , զի միջնորդուի նորին
անձրե և ձիւն և կարկուտ և հողմ
գոյ . և ազգք Լյոլիւրաց և թիւրքաց ,
տեղեակ են այնմ , և այն է արուեստ
նց . և նոքա ասեն թէ վհուի քարանց

զայսպիսի զօրութի առնեն, բայց սուտ է :
 Այլ զայն որ՝ որ զայս գործ կարէ՛ առ-
 նել և գիտէ՛ (Սահպանի կոչեն , և ՚ի
 նոցանէ գրոջ մի ՚ի նոյն գործ կատարեալ
 հմտութի ունին , որք յեղանակաց
 տարւոյն յ՛ և իցէ եղանակի մինչ կամի
 ցին զանձրև և զձիւն և զամպ և ըզ
 հողմ և զկարկուտ ՚ի ձեռն այս քարիս
 ներգործութի իսկ բերեն , այնչափ որ
 թէ կամիցին ՚ի միում գեղջ ՚ի միում
 կողման անձրև և ձիւն գոյ , և ՚ի միւ-
 սում կողման արեգակն և օդն քաղցր
 և վճիտ լինի : Այլ ոմանք ասեն թէ իւ-
 րաքանչիւրում քար մի գոյ ըստ չափու-
 իւրում յատկացեալ վն անձրևոյ , և
 ձեան , և կարկուտ և հողմոյ , և այն ազգք
 ՚ի պատերազմունս լինքեանս ունին ,
 և այնու նենգութի՛ հակառակորդաց
 իւրեանց յաղթական լինին , և նկուն
 առնեն : Այլ իպնի () էքերիա բազին ,
 ՚ի գիրս յատկուէց իրաց բերեալ է ,
 թէ յերկիրն (Սախրքիսթանի գոյ վտան
 գաւոր և դժո՛ւարանց տեղի մի , և
 մինչ անասունք ընդ այն կամիցին անցա-

ներ, զամբակս նց՝ ՚ի Թաղիս առնուան, և
յոյժ յամբարակս ընթանան՝ որ Թէ սրմ
բակ միոյ անասնոյ ՚ի քարն Տարկանիցի,
առժամայն մէջ խաւարչտին ՚ի յայտ
գոյ, և ամու թուի գոյացեալ լինի. և
՚ի քարանց աստի զոմանա ՚ի քաղաքս
Սախաբիսթանի բերեն. և մինչ կամի
ցին Թէ անձրև գոյցէ՝ քար մի յայնցս
նէ ՚ի ջուր եդեալ, ապա Տանեալ կա
խեն, անձրև սկսանի տեղալ:

Յազախ որակոսթեան Ահմէ նեյլուֆերեն,
և յազոսթեաց նր:

Գլուխ, Խմբ:

Աւայն է քար իմն, և լինի ՚ի ծովն
ովկիանոսի, որ ՚ի տունէ ՚ի ներքոյ
ջրոյ լինի, և ՚ի գիշերի ՚ի մերայ գայ.
և կարելի է Թէ ՚ի բովանդակ կենդա
նական քարանց իցէ. և Մ. րիատուէլ ՚ի
գիրս քարանց բերել է, զի Թէ ՚ի չափ
միոյ դրամակչախ յայնմ քարէ ՚ի պարս
նոց ձիոյ կապեացեն՝ ձայն ոչ առնէ և
ոչ խխնջէ. և զայս քար Մ. զէքսանդրն
Տոռոմոց յայտ ածեալ է, յորոց կապեր
՚ի պարանոցս ձիոց ՚ի ժամանակի մինչ

կամէր յանկարծ արշաւել 'ի վճ Թշնա
մեաց և դիշեր սկոխ առնել:

Յազատս սրտուքէ չարին՝ որ խշի հոճէ՛ցե
նոքալի, և ջարդուքեանց նք՝

Վաւի, Դ՛:

Լ և է այն քար իմն 'ի ծովն դուզիւ
միայսինքն մաղբըպի և մինչ ծովն
այէծփի, զայն յեզը ծովուն արկանէ
և է նման Քէլէքէի, գոյն նք սպիտակ
լինի, և սակաւամասնեաց դեղնուի 'ի
յինքն խառնեալ է:

Յատկուի նք այն է, զի մինչ զայն լե
առն, և 'ի չափ միոյ տանկի ունողի զախ
տըն Մէսանէի՝ տան, յոյնմ ախտէ
բժշկուի դտանէ, և 'ի նմա գոյ տեսակ
մի ուրախական, զոր 'ի Միւֆեռուի հա
Թրս 'ի գործ ածեն, և ասացեալ են,
Թէ որ ինչ անախի 'ի կշիռ միոյ մագալի
իցէ, հաւասար միոյ կարմիր տինարի ար
ժէջ ունի, և մատանէ քար 'ի կշիռ միոյ
մագալի հազիւ լինի, զոր և 'ի դեղորոյս
աչաց 'ի գործ ածեն, ճիլա տայ աչաց,
և զոյս տեսուէն յաւելու, և զսպիտա
կութին որ 'ի վճ սևուցի աչաց գոյս

ցեալ է , մինչ յայնմանէ 'ի յաչս քար
շէն՝ մաքրէ և սրբէ :

Յազաֆս որակո-ւթեան Սերէրանի պահրէ
ինչէցեւոյն , և յառի-ւթեան նք :

Գւր-ի , ՆԱ՛ :

Սերէրանի պահրին 'ի ծովն լինի , և
է նման գետահան խեցգետնոյ . և
առաւել օգտակարագոյնն 'ի յանդամս
նորին՝ է այն որ 'ի կողմն գլխոյն է :

Առ յատկութի նք այն է , որ թէ ուրուք
կուրծքն ցաւի , և չափ մի յայնմանէ
ընդ ինքեանս ունիցի , բժշկութի գտանէ .
և անտի 'ի գեղորայս աչաց 'ի գործ ա
ծեն , գոյսն աչաց յաւելու , և գլխս
նք գորաւոր առնէ , և ունի սուր հոտ .
և մինչ զայն սրբեն՝ հոտ և վայելչութի
նորին առաւել լինի . և է բնութի ջերմ
և չոր : և թարգմանի խեցգետին
ծովային :

Յազաֆս որակո-ւթեան Սերէր'ոյ պահրէ ինչէցե
ւոյն . և յառի-ւթեանց նք :

Գւր-ի , ՆԱ՛ :

Սերէրանի կեղանի իմն ծովային .
և ոմանք յարտաքին անդամոց նք

քար են կարծր . և մնացեալն յանդա
 մոց նր միս է , և ՚ի նմա թիւնաւորուի
 գոյ . զի ոմանք ՚ի բժշկաց ասացեալ են
 թէ ՚ի նմա թոյն գոյ սպանողական . և
 ՚ի սոյն ազգէ կենդանական քարինք ՚ի
 մէջ ծովու բազում են , ձեովք և գու
 նովք զանազան զոր հասարակութիք
 մարդկան Աիուշմահի կոչեն . որոյ ար
 տաքին անդամքն քար է և ներքինն
 կենդանի . և մի կողմն նորին բաց է .
 զի այն կենդանի որ ՚ի ներքս նորին ի
 ցէ՝ գլուխ ընդ այն ՚ի դուրս հանեալ
 կերակրոյ խնդիր արասցէ , և յօժարա
 կան կարողութիւն , զոր ստեղծօղն անի Մ
 նմա տուեալ է , ՚ի վր ջրոյն ընթանայ .
 և կրկին ՚ի ներքոյ ջրոյն ՚ի յատակ ի
 ջանէ . որ ոչ ունի ձեռս և ոչ ոտս , և
 ձեով բոլորչի է և գունով սեաւ լինի .
 և թարգմանի նասպաստակ ծովային :

Գաղափս Հաճէ՛րի նէվին .

Գլուխ , ԴՊԿ :

Լ այն է քար իմն , յոյժ կարծր՝ և
 նման հրոյ լոյս տայ . բերեալ են՝
 զի թէ զմի դրամակշեռն նորին ՚ի պա
 թն

ըանոց ուրուք կապիցեն , որ 'ի քուն
իցէ . քանի որ այն քարն ընդ նմա լինի
ոչ զարթնու . և եթէ 'ի ներքոյ բարձի
նորին ևս դիցեն , զնոյն գործ առնէ .
և թարգմանի քար քնոյ :

Յազափո սրախ-Ռեան այնք քարի սր իռչէ ,
Հածէ'րի շրտի նէ՛վ :

ԳԵՆԻ . ՆՈՒՆ :

Եւ այն է քար իմն հողագոյն , որ սա
կաւամասնեայ հակումն ունի 'ի սև
ութի , և 'ի կշիռն ծանր է իբրև զկա
պար , և արտաքին երեսն նորին յոյժ
կարծր է : Արոք 'ի սոյն քարէս 'ի ջափ
տասն գրամակշռի ընդ ինքէն ունիցի՝
'ի հարկէ քունն իւր ոչ գոյ , և 'ի քնա
տուէ վտացեալ լինի . և եթէ այս քար
լեւեալ 'ի ջափ ծանրուե ութ կորիզե
տացեն ունողի զախտն ուրկուե , բժը
կութի դտանէ . և եթէ այսր տեսակի
քարիս գիւտ գոյուե իցէ , զարմանալի
իմն է : և թարգմանի քար ներհակ
քնոյ :

Յաղագս որակու է Չանկ'րի դաշտն , և
չապու-խէան նր :

Պաշտ , Օ՛ն :

Լյն ևս տեսակա ունի , մին յայնչա
նէ 'ի հանքս Քէճի լինի , որ հու
րըն զնա կիր առնէ . և այլ իմն տեսակ
գոյ ծովային , և այն է նման մարդարիտ ,
և անտի արարողական մարդարիտ կազ
մեն . և հետեօք արուեստին զայն
Քէճի պեղարդ կոչեն . որք են կոտորք
սպիտակ և փայլուն , որինք բարեգոյն
և վճատագոյն իցէ , լուսագոյն է . և եթէ
արուեստաւ որն հմտական իցէ , յայն
մանէ այնպիսի մարդարիտ կազմէ՝ զոր
զանազանել ոչ կարիցեն . և մարդիկ այն
պէս կարծիս առնուն թէ խկապէս
մարդարիտ է : Այլ թէ զգալուն լոյծ ա
րարեալ չափ մի Սանդի արեպի և քրք
քում ընդ այնմ խառնիցեն . և այնու
իրս ինչ գրիցեն . մինչ չորանայցէ , նման
ոսկոյ լինի , և առանց քրքման՝ նման
արծաթոյ : Յատկուի նր այն է , զոր
մինչ լոյծ առնիցեն և 'ի ձեռս կամ յոտս
օժեպցեն , և կամ յայլ անդամս և 'ի

Հուր միտեացեն՝ ոչ սյրինս և եթէ զկատա
ւրն այնու թացեալ, և յետ այնր չորա
ցուցեալ ՚ի Հուր արկանիցեն՝ ոչ
սյրեացի:

Յազաֆա Գիտութեան Հասէ՛րի բիւտանն և
յտախութեան նորին:

Գլխի, (Ս.Ս.) :

Եւ այն է քար իմն յոյժ սպիտակ և
կակուղ, և է Մատէն նորին ՚ի
բազում տեղիս և անտի աղիւսս կազ
մեն և որմոց իզարս առնեն, և զգեղե
ցիկ նկարս ՚ի վժ երեսաց նորին նկա
րեն. և թէպէտ այն քար կակուղ է,
բայց յոյժ ճիլա առնու. և ՚ի քարէ ըն
խամին նմանակս Հատոյ մարգարտի առ
նեն և զերես նորին՝ անուցեալ դալ
դով վերածածկեն գեղեցիկ նմանակ
լինի: Եւ սլ տեսակ մի յայնմանէ ՚ի
Ժովն Եամայ գոյն զգոյն բազմագոյն
և նկարէն՝ յոգնատեսակ և զանազան
նկարուք զոր կոչեն Մէրմէր. և յայն
ցանէ ՚ի շինուածս ապարանից թագա
ւորաց և սղոթարանաց արկանեն. և
սմանք նմանութի ունին Քիւխամ քարի:

և քան զՌիսխամն կարծրագոյն լինին .
 և Հանքք նորին են ՚ի լերինս Սուրբ
 և ՚ի սահմանս Թախաբիսթանի . և զայն
 Սէնկի եաշ կոչեն . և յայնմ տեսակէ
 անօթս և ըմբռնետեղս դանակաց , և
 մատանիս , և մատանեքարինս կազմեն .
 և յայնմանէ բազումք են , որք նման
 անկանին Լաէշպ քարին . և զանազանու
 թի ընդ մէջ նց կարծրութի և կակղու
 թին է : Իսկ ըստ այլ գիմաց միակերպ
 քար են , և փորձ նորին այն է , զի զայն
 յատամունս շիեն , եթէ ատամն զայն
 տաշիցէ՝ Լաշ է . և եթէ ոչ տաշիցէ
 Լաէշպ է : զոր խարտոցաւ և ս փորձեն ,
 զի Լաշն խարտոց ընդունի . իսկ Լաէշ
 պըն ոչ ընդունի :

Յատկութի նր այն է , զի թէ զմի մագալ
 Ռիսխամն լեսեալ տացեն ունողի ախտ
 փայծաղան՝ զի կերիցէ , բժշկութի
 դասն է :

Յաշաֆս գեորո-թեան Հաճէ՛րի Բո-թեային , և
 յարկո-թեան նր :

Գւրտի , ԾԱԼ :

Լաւ այն տեսակս ունի . որոց ոմանք
 արունեատականք են և ոմանք 148

Հանքական . բայց՝ զայն որ արուեստին
 է (Թուֆիայի նայիզէ կոչեն . և Հանք
 քականն ասի Թուֆիայի գանտի . և
 մատեն նորին է ՚ի լեառն մի ՚ի յերկի
 ըն Պատեէի մօտ ՚ի Վանտ . ուր կայ
 առու մի , և ՚ի միջոյ աւազոյն այնորիկ՝
 մանր մասունք յայնմ Թուֆիայէ ՚ի
 գուրս դան . և գոյն նորին կանաչ է
 և փայլուն լինի , և նմանութի ունի սա
 սունի : Վոյ և այլ իմն տեսակ , որում
 Թուֆիայի փինկեանէք ասեն . և այն
 ևս Հանքական է . Վոյ և այլ իմն տե
 սակ՝ որոյ գոյնն յոյժ սպիտակ լինի , և
 նմանութի ունի աղի և առաւել ազնու
 գոյնն Թուֆիայից՝ այն է : Վոյ և այլ
 իմն տեսակ գեղնաշորթ . և այլ իմն տե
 սակ գոյ , զոր Թուֆիայի Տելէք կո
 չեն : Յատկութի նր այն է , զի ՚ի գեղո
 ռոյս աչաց ՚ի գործ ածեն , զոյսն տե
 աութ յաւելու : Եւ բովանդակ տեսա
 կըք Թուֆիայի , զհոսն քրտան անու
 շացուցանեն և զնմ խոնաւութի՝ որ յեր
 աչաց իցէ լոյժ առնեն : Եւ եթէ ըզ
 մասն ինչ ծեծել Թուֆիայի ընդ ջամ

չոյ 'ի կորիզէ զատելոյ 'ի միասին ծե-
ծեացեն, և 'ի թոյլ կրակի թագուացեն,
այնպէս զի մի' սյրեսցի, և 'ի վճ հալել
սպինձոյ ձգեսցեն, և զգլուխ բութակին
ծածկեսցեն, պղինձն զգոյնն փոխէ, և
զգոյնն ոսկւոյ առնու:

Յառաջս սրահո-նէան տեսայն ի սիփի:
Գլուխ, ՆՐԲ:

Իսմիտ է Մ. րապի բառ, որ ասի Պարո
կերէն Սէնկի սիւրմէ, և հայերէն
ժարիր. և է յայտնի և հռչակեալ. և
այն է քար իմն սեաւ և վճիտ անփոյ-
լուն և յոյժ ծանր. և գոյն նր ուր ըզ-
գոյն երկաթոյ. և է մատէն նորին 'ի
բազում տեղիս. և լաւագոյնն այնց
Իսաբէ հանին է. և ընդ այնմ քար սպի-
տակ օտարական խառնել լինի, և խաւ
'ի խաւ լինի. և եթէ զքարն Իսմիտի
'ի հալեալ արծաթն ձգեսցեն՝ զշէքէնն
'ի նմանէ տանի, և ամենևին կերպիւ-
ինչ կուան ոչ ընդունի, մինչև կրկին 'ի
բութակն ոչ դնիցեն: Յատկութի նր այն
է, զի աչաց յոյժ օգտակար է, և զայս

տեսուե թողովէ, և ուժեղացուցանէ
 զՂեւո աչաց, և զարկածս՝ որք աչաց հան
 դիպեալ իցեն պատճառաւ ցաւոյ՝ փա
 բասէ. և ծերոց՝ որք պատճառաւ բաղ
 մամեայ դողոյ, ցաւեալ իցեն աչք, ծա
 բիրն Սամիտի յոյժ օգտակար է, մինչ
 չափ մի միսք ՚ի յոյն խառնիցեն: Եւ
 եթէ զքարն Սամիտի լեսուցուն, և
 գինեաւ ումեք տացեն՝ փութով արբե
 նայ. և ՚ի նմա Թիւնաւորութի գոյ միջ
 նորդուք կապարի. և բնութի նորին Ղերմ
 և չոր է. և ՚ի նմա կալումն գոյ, այսինքն
 գապզ. և կոտոր մի Փանիտի ՚ի միախին
 ծեծեալ, և ՚ի վեր խոցից եդեալ, ոչ
 թողու զի վեր լինիցի. և եթէ վեր լեցե
 սպիտակ խիժիւ օժեցեն, օգուտ
 արասցեն կամօքն Լ. Ե.

Յազաֆոս սրախութեան Ե ալէնէճի, և յապ
 իութեան նր:

Գլորիո, Օմի:

Եւ Ե ալէնէճնէ քար իմն հանքա
 կան, և գոյն նր սեւա է՝ որ ՚ի
 կարմրութի հարկանէ. և մինչ զնոյն լե

առան, ջուր կարմիր 'ի նմանէ 'ի դուրս
գայ, ուն զուտ արիւն . իբր այն որ 'ի
Խիւմաճէնէն . և այն երկու տեսակ է
մին Լ'տէսի ասի . և միւսն ճ'ավէրսի .
Լ'տէսի այն է, որ կոտորք են իբրև ու
պըն 'ի միասին շարակցեալք . և ճ'ավէր
սի այն է՝ որ իբրև կորեակ լինի, և այն
ևս բուսեալ . Եւ եթէ զմագնիս քարն
մեղմաբար այրիցեն, դործ և յատկուի
նր ուն Շ ազէնէճ լինի, և լաւագոյնն
տեսակաց այն է՝ որ փութով 'ի միմեանց
զառանի, և հողն մաքուր ոչ լինի .
Բնուի նորին ցուրտ և չոր է . և այն
որ 'ի սեաւն հարկանէ՝ ջերմ և չոր է,
և ջերմուի յաւելու, և վայելուց է . և
մինչ զլեւեալ Շ ազէնէճն 'ի վր յա
ւելու՛ած մնոյ ցանիցեն, զայն հալէ . և
աչաց ճիլա տայ . և 'ի դեղորայս աչաց 'ի
կարմիր և 'ի կանաչ շաՔս զայն 'ի դործ
ած են, օգտակար է աչաց, և զընթացս
դաշտանուէ՝ յետս կալնու, և ումեք՝
որոյ սերմն ակամայ 'ի դուրս գայ՝ յոյժ
օգտակար է .

Յազատես սրախօւլեանն Օ իրնիկի , և յապիտ
Բեանց նր՝ օ

Գալուիս , Կ օ

Եւ այս ևս տեսակս ունի, կարմիր
և դեղին . զՕ իրնիկին լեսուն և
ընդ արեպի սամղի լոյծ առնեն , գոյն
իմն լինի դեղին . որով ՚ի վր թղթոյ և
այլոց իրաց նկարս առնեն . և եթէ զայն
բռով խառնեն , և ջուր ՚ի վր հեղուն ,
մինչ զի ուն խմոր լիցի , և ՚ի տեղի ուրեք
օժեն , զմազն յարմատոյ փրթուցանէ օ
և եթէ զդեղին և զկարմիր Օ իրնիկին
կիր առնիցեն ըստ կարգի կերպին առ
ունեստականաց՝ մինչ զի սպիտակ լիցի ,
և չափ մի պուրէիւ ՚ի վր հալեալ պղըն
ձոյ ձգիցեն , զպղինձն սպիտակ առնէ օ
Եւ եթէ զայրած զիրնիկին յատամունս
շփիցեն զդեղնութի և զկանաչութի նր
մաքրէ , և զմիս ըտերաց ատամանց ամ
րացուցանէ , և զարիւն գալն յետս կալ
նու . Եւ եթէ զՕ իրնիկին մանր լե
տուցուն , և ՚ի ջուրն լոյծ արասցեն , և
՚ի տեղուջ յորմէ կամիցին զճանճն ՚ի
բաց հերբել՝ անդ դիցեն . ճանճք որք
՚ի

Դիւոյն ջուրն հատանեն՝ մեռանին . և
գիտելի է զի Օ իրնիսն է Թոյն
սպանողական :

Յազատ գիտուէ տեսչացն Պուրէի , և
ցափնաէց նր :

Պւր-իս . ԿԼ . :

Եւ Պուրէն տեսակս ունի , որոյ մի
տեսակին Պուրէի սիֆիյտ ասեն .
և գոյն նորին է որպէս ծեծել բոյ
և զայն ՚ի յոսկին և ՚ի յարծաթն ընկել
նուն , ուղ զի փոյթ հալեսցի և ոչ ցրթ
ուեսցի , և զբնուի նր կակղացուսցի ,
և այլ իմն տեսակ գոյ՝ որում Պուրէի
րէվէնտի ասեն . և ոսկերիցք զլիհամս
ոսկւոյ սյնու առնեն , որ հեղեղուկ
առնէ : Եւ զմիւս տեսակն կոչեն Պու-
րէի Թէնկեար , և զերկաթն սյնու կա-
րելի է լիհամ առնել : Եւ այլ իմն տե-
սակ գոյ՝ զոր կոչեն Պուրէի նան . և
եթէ չափ մի անտի ՚ի իմոր արկանի
ցեն , ամ հաց որ ՚ի նոյն իմորոյն եփես
ցի , անեցուն լինի : Եւ եթէ ՚ի կաթն
արկանիցեն՝ փութով Թանձրանոյ և
մածուն լինի . և կարէ զպէղկմի . և

զբնութիւն կահուղ առնէ: Եւ այլ իմն
 տեսակ գոյ զոր Պուրէի երկնի կո
 շէն: Եւ լաւագոյնն տեսակաց՝ Եւր
 րուան է, զոր ՚ի կողմանցն Եւրիպոսի
 բերեն. և այն է գերագոյն տեսակ և
 ցամաքեցուցանէ զխոնարութիւնս . և ՚ի
 յարուեստին ՚ի գործածի. և բազումք
 ՚ի Պուրէից ոսկի գնացուն ջուր են, և
 մինչ օր հարկանէ քարանան և պաղին:
 Եւ եթէ զՊուրէն ընդ մեղեր զան
 դեսցեն, և ՚ի կարաս քաղցր քացախոյ
 ձգեսցեն և զերիս աւուրս զբերան
 կարասին ամբացուցեն, քացախն՝ որ ՚ի
 նմա յոյժ թթու լինի: Եւ եթէ զՊու
 րէն լըլըոյ կովադիայի խառնիցեն,
 և ՚ի ջուրն լոյծ առնիցեն, և յայնմ տեղ
 լոջուր օձք դոն՝ սրսկիցեն, փախնուն:
 Եւ եթէ զՊուրէն սառի՞ Քիւ լեսու
 ցուն, և ՚ի քիթ կնձ փչիցեն՝ և փուրն
 գայցէ, կոյս է. և եթէ ոչ փոնդայցէ՝
 բացերես է. և զՊուրէն ՚ի գրեխս ՚ի
 գործածեն, ոսկի զի նիւթոյն գնացս
 տացէ, և բնութի նր ջերմ և չոր է, ՚ի
 յետինն աստիճանի երկրորդին, և լուս

ցօղ և ճիշա տո՛ւօղ է , և զբնութի և
զմորթ երեսաց մաքրէ . բայց ստամոք
սին յոյժ վնաս ունի . և եթէ զպուրէն
ի վր որովայնի ծեփիցեն՝ յատուկ զօ
րութի իւրով զորդուես աղեաց
սպանանէ :

Յաղագս գիտուէ Շ էպի՛ և յարկուէ նրօ
Գլուխ , կիս :

Լյն ևս տեսակս ունի . որոյ մի տե
սակն նման է Օ անի սիֆիյաի .
և ներկարարք զնոյն Օ անի պիւլուր
կոչեն . և լաւագոյնն այն է , որոյ գոյնն
յոյժ վճիտ է . և զգոյնսն ՚ի կատարելու
թի հասուցանէ . և ոմանք ՚ի սահմանա
ցըն Սեմրարի՛ Շ էպի էէմնի կոչեն , և
այն իբրև զպիւլուր վճիտ լինի . Լը
յատկութի նր այն է , զի մանր լեսեալ
ի ըստերս ատամանց օծեն , զմիսն ըստե
րաց ատամանց պնտացուցանէ , և զարիւ
նըն արգելու , և վիրաց մոյ ընտերաց
ատամանց օգտէ . և ՚ի յարուեստ Սքսի
րին մեծ սկզբնաբուն է . և ՚ի բնութե
իւրում կատարեալ կալումն գոյ , և

բնութի նր ջերմ և չոր է ՚ի յերկրորդ
աստիճանի, զգնացս արեան ՚ի բազում
անդամոց յետս կալնու . և ՚ի վր այրա
ծից օժեալ օգտակար է . և եթէ ընդ
աղի խառնիցեն, հոտոյ բերանոյ օգուտ
ունի:

Յարագս տեսչացն Հաճի՛րի շաճին, որ է
Արջասոյն:

Վալուի, կվա:

Եւ այն քար ունի տեսակս և յայտ
նի է . և բովանդակ տեսակաց նր
բնութիքն իրերաց մերձ են . և գոյն նր
սպիտակ է և կարմիր և դեղին և կա
նաչագոյն . որոց Վաւջին տեսակին
Վաւջնդար ասեն . և միւս տեսակին
Վաւջէնաբիս . և երրորդ տեսակին Վաւ
ջէնա, և այն է կանաչ . և Վաւջէնաթիսն
սպիտակ, և զայս երկու տեսակքս ՚ի
դեղորոյս աչաց ՚ի գործ ածեն, և ՚ի
սպեղանիս ՚ի կիր արկանեն, և զգոյսն
կատարեալ առնէ: և եթէ ՚ի վր խոցից
ցանիցեն յորոց բազում արիւն գնայցէ՝
յետս կալնու . նաև զշարունակութի
գաշտանին ևս . և եթէ ՚ի վր ճակատու

օժիցեն, գգալն արեան 'ի ռնգաց յետս
 կալնու, և եթէ զ[՛] ամն ընդ Ագբը
 գարհայի, և մանրորաց Չօպի սուֆրի
 'ի վր գրան տան ծխիցեն, ամ լու և
 մոծակ որք 'ի տան անդ իցեն՝ մեռա
 նին: Աթէ դբիթն ուրուք Վալպէն
 տիտի՛ օժիցեն, քուն 'ի յայնմանէ եր
 թիցէ, մինչև ցայնժամ զոր Ջերմ Չրով
 լուանայցեն, և մաքրեացեն, և իւղով
 ձիթոյ օժանիցեն. և ոյլ տեսակ գոյ
 զոր 'ի կողմանցն Ագիստոսի բերեն,
 այն Ջերմ և չոր է 'ի յառաջին աստիճա
 նի. և 'ի նմա թիւնաւորութի գոյ, զթոքն
 չորացուցանէ, և իցէ թէ սատակէ. և
 'ի նմա կատարել կալումն գոյ, ըրգի
 նխայի օգուտ լինի, և ջրաց մաս ու
 նի, և գողգողուն անգամոց օգուտ
 ունի. և 'ի ջուր ինչ՝ յորում զած եղել
 իցէ, եթէ ոյնու գլուխ լուանայցեն
 և ունակութի առնիցեն՝ Ջերմ բերէ:

Գաղտն սրբաւի՛ Համէ'րի նուշտիրի, և
 յասիս-բեանց նր:

Գաղտն, Կ'Ի:

Կուշտիրն ևս քանի մի տեսակ է.
 Կախ հանքական և է այն 158

լաւագոյն , որ նման է պիւլլուրի . և
 ըստ մեծի մասին գոյն նր սպիտակ լինի ,
 նման մանրեալ աղի . և բերեալ
 են թէ յայնմ տեղւոջ նոյն կենդանի
 զոր Սէմէնտէր կոչեն , այսինքն սալա
 մանդր , ՚ի մատենի նուշատիրին է . և
 այն է կենդանի իմն իբրև զկատու , զո
 ըոյ մորթն հուրն ոչ այրէ . և թագա
 ւորք ՚ի նմանէ Տէսթարիան կազմեն
 այսինքն թաշկինակ սեղանոյ . և Սա
 տենք նուշատիրի յոյժ Չերմ լինին , և
 Չերմուք զձուն եփեն : Աւ յատկութի
 նր այն է՝ որ զսպիտակ մարմինս սևա
 ցուցանէ . և եթէ զայն ժէնկեարիւ
 խառնիցեն , և ՚ի վր արծաթոյ ՚ի գործ
 ածեալ օժիցեն այնպէս լինի՝ որ իբր
 օսկի : Աւ եթէ Չրով նուշատիրի զերե
 օրս իբաց՝ (զորս անագեայ լինամ կամի
 ցին առնել) շփիցեն՝ լինամս լաւագոյն
 գոյ . և եթէ զերկաթ կամ զպղինձ կամ
 զարոյր կամիցին օսկէզօժ առնել՝ միջ
 նորդուք սպիտակ նուշատիրի կարի
 ցեն առնել , և եթէ ընդ անագի խառ
 նիցեն յետ կատարեալ լեսելոյ , և ընդ

իւզոյ լոյժ արարեալ՝ ՚ի վ՛ր անդամոյ
 դլայ առնիցեն, զայն անդամն սեւացու
 ցանէ: և խառնու՛ած նուշատիրին ջերմ
 և չոր է, և ՚ի նմա կալումն գոյ բովան
 դակ. և ունի յատկու՛ի որ զերս ՚ի խո
 ղոց քարչէ. և տեսակ մի ՚ի նուշատիրէ
 արու՛եստի՛ն կաղմեն և այն ևս յոյժ
 լաւ է. բայց յամ որպիսու՛իս զյատկու՛ի
 հանքականի ունի:

(Յողագոս գիտու՛ի քարանց. որք յարմարու՛ի
 ունին ճէվահիրէ:

Վշու՛ի, կկ:

Վ գիրս յատկու՛եց քարանց որք պատ
 մեալ են ՚ի նախնեաց, և յիշումն
 բազում քարանց արարեալ. իւրաքան
 ջիւրումն ՚ի նոցանէ յատկու՛ի մի ասա
 ցեալ, յորոց ոմանք ՚ի սմին ժամանակի
 հռչակեալ և ծանուցեալ են, և ոմանք
 անծանօթք: Քերեալ են թէ ոմանք ՚ի
 քարանց այն են՝ զորս բարերարն ՄԾ
 ստեղծեալ է, զի մարդիկ այնոքիւք
 վարեացին, որք են հարկաւոր միջոցք
 կեցու՛ի նց, և առանց նոցին իր ինչ
 ոչ բացակատարի, որովք այսօր կեցու՛ի
 նց

նց կարդատրի. իբր Սսկի և Մ. րծաթ. յորոց և դրամս կազմեալ են, ըստ սո վորուէ ծիսից իւրաքանչիւր գաւառի. և մարդիկ նոքօք գին և վաճառ առնեն. Աւ ոմանք այն են որովք զոս կեղէն զարդս արքայից կազմեն. ուն Աւա գութ, և մարգարիտ, և Ալ, և Օ իւ միւրրիւտ, և Քիյրուղէ. և ոմանք այն են, որք պատճառ են լաւացուցման կերակրոց նց, ուն Մ. շքն: Աւ ոմանք այն են որք փարատեն զցաւս, որպէս Սուրբիա, և Հաճէրի էրմէնի, և Սար գաշիսա՛ի յորս ուրախարարուի գոյ: և Շ մանք այն են՝ որք ընկերաբար բաղխամաք ուն երկաթ և պողոպատ՝ հուր գոյացուցանեն, և այնու օգտուիս անեզրահանա առնեն, և այնու զմարմինս կարծրացուցանեն. ուն զսնդիկն: և ոմանք զկարծր մարմինս օգնութիւն իւրեանց հեղեղուկ առնեն որպէս Պուրէ և Մնագ. և ոմանք ՚ի մէջ երկուց մարմնոց ՚ի հրահալելեաց կցորդուի անկանին և միջոցաւ իւրիք յայտածումս գունոյ առնեն արտաքոյ երկուց մարմնոցն, ՚ի

քովանդակ հրահալելեացն, ուն Թառ
 Թիա, և Մաղնիաա, և Մարտի պղինձ
 և կապար և Սիֆիլյոսէ, և ոմանք զերս
 վայելչագարդ առնեն ՚ի գունոց իւ
 բեանց, ուն Կարմրակաւն, և Սեւդնու
 կաւն, և Սիրնիխն, և Սաւվերան, և
 Տէնկեարն, և այլք: և ոմանք ՚ի նոցա
 նէ երկաթ գոյացուցանեն, յորում այն
 քան օգտուիք և յատկուիք գուն: և
 ոմանք ՚ի նոյն տեսակէ՝ զայլ հրահալե
 լիս. ուն պղինձ, և անադ, և կապար՝
 յորոց անօթս և ամանս կաղմեն, որոց
 մարդիկ պէտս ունին: և ոմանք յանդա
 մրս կենդանեաց գոյացեալ լինին. ուն
 խէռմիւհրէ, և ոմանք այն են որոց
 գուրան կենդանի է որպէս Սերէգանի
 պահրի, և Սարնէպի պահրի, և Սիֆիլյոս
 միւհրէ. և Սախիւնտիվ և Սիոլի մա
 հի: և ոմանք իբրև զբոյս և զծառ են,
 որպէս Սերճան՝ որ միջականէ ընդ մէջ
 հանքի և բուսոյ, և ոմանք ՚ի պիւլու
 բէ, և վերաքարից, և այլք: և ոմանք այն
 են որք ՚ի բուսոց են, բայց ջերմութիւն
 հրոյ ՚ի նս հասեալ սառուցանէ և քա

րացուցանէ, ունի անապ . և ՄէրՏէն: և
 ոմանք Թուռագեղ են՝ և այլք գեղթամբ
 փատղէ՝ Տր են, ունի Հաճէրիւթէյան,
 և այլ տեսակք Պատղէ՝ Տրից, և Ս իւ
 միւրրիւտի: և ոմանք այն են՝ որք փայ
 լեն և ունի մում վառլառին, ունի ՔեռաՏ
 ուրպոց, և Մէնտէրուտ: և ոմանք ՚ի
 շինուճածս և ՚ի կերտուճածս ՚ի գործ
 ածին ունի բուռ, և Սարուճ. և զայսո
 սիկ ամենակարողն ՄԾ բովանդակ ըս
 տեղծ գերակատար կարողութեն իւրով
 ունի զի մարդիկ ծանիցեն նորք զարա
 րիչն, և ՚ի նոցանէ եթէ պարտ իցէ օ
 գուտ շահիլ՝ օգտեսցին. և որինչ ՚ի
 հարկաւոր պիտոյս մարմնոյ ՚ի գործ ա
 ծի, ՚ի կիր արկանիցեն. և ՚ի սոսա յամե
 նեսին օգուտք բազում են և շահք
 անթուճելիք. և օրհնեալ է ՄԾն ամենա
 գեղեցիկ և ամէնիմաստ, ստեղծագոր
 ծողն արարածոց:



Իստո՛ւ ի Բայնայաթու՛ն էօրն հրահալելեաց օ
Յազա֊ո ծանուցման բուն արմատսն էօրանց
հրահալելեաց համա֊օրաի՛ն ։

ՊԵՆԻ, Կ.Օ. ։

Մինչ նշոյլք ճառագայթից արեգա
կան ՚ի խորոջս երկրի ներգործենս,
և ՚ի ջերմութննր բունն զօրութի դաս
նէ . և ՚ի վրցրտութ որ ՚ի նմին խորոջի
իցէ (և մանաւանդ ՚ի խորոջն միում
յորում ջրականութի կայցէ) գոլորչիք
գոյացեալ լինին . և ՚ի խորոջն խնիք յո
րում֊օդ իցէ , և յերկրականութն որ
դայն օդն շրջա֊իակեալ իցէ , ծուխ իմն
գոյացեալ լինի . որ է նիւթ և բուն
արմատ հրահալելեաց . և ՚ի բաղադրու
թեց՝ որք ընդ մէջ նց անկանին , և հա
լողութ իմն , որ ՚ի վր նց յայտ լինի , զա
նազան հրահալելիք և պէսպէս ճէվա
հիրք , և այլևայլ հանքական իրք գոյա
ցեալ լինին , և զանունս հրահալելի՛ եօ
թըն ճէվհերի գոյացութ և ս՝ առատրեն ,
ոսկի , և արծաթ , և պղինձ , և անագ ,
և կապար , և երկաթ , և խարխիսիյնի , և
մինչ վերոյիշել ծուխն ՚ի խորոջս գոյա

ցել լինի, և ելա ոչ գտանէ զի ՚ի դուրս
ելանիցէ, և յերկար ժամանակ մնայ,
լուծուի ընդունի, և թանձրացեալ
կապի, մինչ զի արտաքին երեսն՝ որ ա-
պականելի է, ՚ի նա ճանապարհ ոչ գտա-
նէ, և նիւթն ջերմութի որ է բուն ար-
մատ նորին՝ ՚ի նմանէ ոչ հասանի. և այ-
սու որպիսութի մնայ, մինչև ՚ի բազում
ժամանակս. և այն գործընթաց գոյակն
պատճառաւ յարակցութի ջերմութի, և
տարակացութի ցրտութի ՚ի յայտ գայ. և
մինչ այն զբովանդակ եփումն գտանէ,
և մասունք նորին միմեանց հանգիտա-
նան, յարմար անկանի, զի ցրտութի իմն
նմա կցեսցի, և հարողութի ՚ի նմին նիւ-
թոջ յայտ լիցի. և այն ճէվհեր որ գոյա-
ցեալ լինի՝ անօսր է. և եթէ գործըն-
կամ ծուխ իցէ, նա՛ և այն վերոյիշեալ
որպիսութիքն որք նմա իշխեն, այն ճէվ-
հերն թանձրացել՝ որ գոյանայ, ծրծրմ
բոյ ճէվհերն է. և այս երկու ճէվհեր՝
նիւթ են բուն արմատոց եօթնեակ
հրահալելեաց. որոնք և չորս տարերքն
բուն սկզբունք են բովանդակ բազադ

րելեաց ստորին աշխարհի, որոց միջնոր
 դու թքն և զանազան խառնուած ուլք՝
 կերպարանք բաղադրելեաց ըստ զանա
 զանուէ տեսակացն գոյացեալ լինին .
 և արտադրուի հրահալելեաց ՚ի խառ
 նուէ գոլորշեաց սնդկի է . և ներդոր
 ծական աղգումն իւրաքանչիւրոյն առ
 միւսն՝ է ըստ սահմանելոյ Մենիմաս
 տին Մ. Ե. և ասացել են թէ ծծումբն
 է հայր մարմնոց . և Սնդիկն մայր է նո
 ցին . և ոյս վն ոյնորիկ՝ զի Չերմուին
 հրոյ զմարմինս ՚ի հալիլ բերէ , և լու
 սաւորադոյն առնէ . և մինչ ոյսպէս է՝
 ոյսոքիկ երկու բուն արմատք ոյսինքն
 ծծումբ և սնդիկ ՚ի սկսուածի յառա
 ջագոյնք են . ապա ուրեմն զսիշումն նց
 յառաջակարգ կալեալ են . և նախ քան
 զսիշումն հրահալելեաց , և տեսակաց ,
 և յատկուէց , և պիտանուէց նց , զնո
 սին թուեալ են :

Գաղափս որակուէ Քիւրքիկի , և յառնուէ նրո
 Վրասի , կլ . 2 . 0

Քիւրքիթն , որ է ծծումբն . որ
 պարակերէն ասի Քիւրքիւրտ , տե

սակս ունի՝ որոց ոմանք դեղին և վճիտ
և փայլուն են. ոմանք կարմիր. և ոմանք
սպիտակ. և Հանքք նորին ՚ի բազում
տեղիս են. և կարմիրն հազունագիւտ է.
Բերեալ են թէ Մատեն կարմիր քիւր
ընթին է ՚ի ծովն արեւմտից ՚ի լեառն
մի, որ ՚ի դիշերի սոյ ճրագ լոյս ասցւ
այն որ ՚ի բերանս հասարակաց է թէ
կարմիր ծծումբն՝ Վիսմա է, խօսք է
անատոյգ. սակայն կարմիր ծծումբն
լաւագոյն և պատուականագոյն է,
քան զայլ տեսակն. և պատճառ օգտու
թէ ներկի, որ կատարեալ ազդուութի
ունի. և վերնտաից օգուտ ունի, և
մինչ նորին միջոցաւ փունդայցեն, դիւս
ցաւուր օգուտ ունի.

Լաւ այն տեսակն որ դեղին է՝ զբազու
մբս ՚ի մարմնոց հրահալելեաց սեւցու
ցանէ, և զարծաթն կիր առնել այնու
կարելի է. և ոսկերիցք Միմի սուխթէ
պոխիքն Վարած արծաթ՝ նովաւ առ
նեն. և զԷ կքէնն ՚ի շիքէնտար ոսկոյ
տանի. և զվատաբնոյթ ոսկին՝ կակղա
ցուցանէ, և օգտուր առնէ կարմրուր

գումնոյ . և ՚ի նմա բովանդակ իւղակա
նութի է , և իբր թէ իւղ է սառուցեալ .
և այլ իմն տեսակ գոյ սպիտակ՝ զոր
Քարսի կօչեն , և այն ուտելի է զոր իւ
ղով շուշմայի լոյծ արարեալ ՚ի վ՛ր բո
րոյ օժեն , զբորն տանի . և չէ միայնակ
առ այն յատկացեալ , այլ և զհանդերձն
զոր սպիտակացուցանեն զծծումբն ՚ի
ներքոյ հանդերձից ծխեն , յոյժ սպի
տակ լինի . և եթէ զծծումբն ՚ի ներքոյ
ծառոյ (Ս) իւրիւնձի ծխիցեն , զծաղի
կրս նորին սպիտակ առնէ . և եթէ զայն
հին գինեաւ լեսուցուն , և զսեաւ մա
զըն այնու ներկիցեն՝ սպիտակ առնէ .
Եւ գոն աղբիւրք ՚ի յորս ջուրն ջերմ
լինի , և ջերմութի նորին է վ՛ն դրացի
մերձակայուէ հանքացն ծծմբոյ , և ՚ի
նոյն ջուրն ներմտանել շատ , քորոյ
անդամոց և հին օտնտի որ ՚ի սեամաղ
ձէ լեալ , օգուտ առնէ . և ցաւոց ար
գանտի , որ ՚ի յաճախուէ խոնաւութ
իցէ՝ օգուտ է . և բնութի ծծմբոյ ջերմ
և չոր է , ՚ի չորրորդում աստիճանի , և
մինչ զայն քացախով դրայ առնեն , զգի
նութն ցաւոյ՝ ցամաքեցուցանէ . 168

Յազաֆս սրահո-նէան Սնդիկ , և յառնո-նէան
նորին :

Գլու-ի , կի՛ :

Սնդիկն Մարապերէն Օ իպագ ասի .
և Քարոի Սիյմապ , և Թարդմանի
Մրծաթաջուր . և այն է գոյացութի
իմն հանքական . և մատէնք նորին են
ի բազում տեղիս . բայց առաւելագոյն
ի սահմանս Քռանկաց , և այն երկու ան-
սակ է . ոմանք ի հանքս ուն աղբիւր գը
տանին . և զոմանս ի քարէ գոյացու-
ցանեն . և քարն սնդկի՛ կարմիր է նման
անլես շէնկէրֆի . և ոմանք զայն շէն-
կէրֆի քեանի՛ կոչեն . և զայն Օ ին-
ճիֆրն զոր ի գոյնս ծաղկարարք ի
գործածեն , ի սնդկէ և ի ծծմբոյ կազ-
մեն . և յոյլ իմն տեսակէ և սնդիկ կա-
րելի է յառաջ բերել . և բազում իւրք
են , որք՝ և ի հանքս լինին , և արունես
տիւն կարելի է առնել , նման Վուշատի
րի որ ի Սատէնէ ելանէ , նաև ի ծխոյ
հնոցի արունեստիւն կազմեն , և բնուի
սնդկին ցուրտ և գէճ է ի յերկրորդ
աստիճանի , և վերելակեալն նորին կա-

լողական է, և եթէ սնդիկն ոչ լինի, ու
 կէզօծուի ոչ է կարելի առնել, և բզ
 մանրորս սակեոյ ՚ի հանքաց ոչ էր հնար
 ՚ի դուրս բերել. և սնդիկն վնասիչ է
 ամ տեսակաց զբոյսարանաց, և խափա
 նիչ է զօրուէ լսելեաց և տեսանելեց:
 և ևս սնդիկն թոյն է սպաննող, և դեղ
 թափ նորին է Սեղապն, որ է փեզէ
 նոյն, և փոխելն օգտէ ուտողի նորին:
 Գոյ ախտ իմն որ կոչի էյլավիւս, և է
 ոյն տեսակ իմն ՚ի Վառլէնձէ. որ աղի
 քրն մի ընդ մի ոլորակեալ լինին. եթէ
 զսնդիկն այնմ մարդոյ տացեն՝ առողջու
 թի դտանէ, և զարխան ուղղեորէ: և
 մեռեալ սնդիկն զՉիլս և զայլս՝ որք
 յանդամս մարմնոյ արտագրին, ամենև
 ին չքացուցանէ: և եթէ զհող սրնդկին
 ՚ի կերակուր իմն խառնիցեն, մինչ մու
 կրն զայն ուտէ՝ առ ժամոյն մեռանի:

Ենթագս Ռոյնոյ, և յառիւթեան նորս
 Իւրոն, կիտ:

Ինեւուին Սակեոյ ՚ի հանքս այնպա
 է, որ մինչ ճառագայթք Վրեու
 ՚ի յոմանս մատունս երկրի ներդործալ
 կանս

կան աղդումն առնեն , պատճառաւ
 աղդման ջերմութի նայն խորոջս երկ
 ընդ արտադրեալ լինի . և ՚ի մէջ նոցին
 կցորդութի և բաղադրութի անկանի , և
 մասունք նորին համանման լինին , մինչ
 չև ցոյն որ նիւթն ՚ի յոյժ անօսութե
 և զտութե լինի . և գոյացութի ճէվհերի
 ոսկւոյն սյուպիսի կերպիւն լինի : Այս
 պատճառն զի ոսկեաց ոմանք զուտ են ,
 և ոմանք ոչ են սոյն է . որ ՚ի բուն ստեղծ
 ման ընդ նիւթոյ ոսկւոյն սյլ գոյացու
 թի իմն ճէվհերի իբր արծաթ , կամ
 պղինձ , կամ անագ խառնեալ լինի . և
 ոսկին է գոյացութի իմն հաջակեալ և
 ծանուցեալ , և բնութի նորին ջերմ և
 գէճ է . և ըստ սյլում բանի բարեխա
 ռն է . և յատկութիք և օգտութիք նր
 սոյնչափ յոյանագոյն են , որ ոչ ունի
 պէտս բացոյստութե : Ասոյց կերպարան
 գոյացութե ոսկւոյ ինքն ամենևին ՚ի
 յորախառնեց չորից տարեցաց ապակա
 նութի ոչ ընդունի , և երբէք տարրա
 կան զօրութի զնոյն ոչ կարացի եղծա
 նել . և զբազումս ՚ի հրահալելեաց ընդ

նմա խառնեալ, զայնս սյրեն՝ և ոսկին
 զուտ մնայ, և զխառնականսն ՚ի նմանէ
 մաքրեն: և եթէ զզուտ ոսկին յերկար
 ժամանակս յերկրի թագուցանիցեն,
 ամենեւին իր ինչ յայնմանէ ոչ պակա
 սեսցի, և գոյն նորին ոչ սլայլեսցի,
 ներհակ սլոց գոյացուեց: և զոսկին
 մինչ լեսուն և յուրախարար Սիւֆէո
 ուրհաթս ՚ի գործ ածեն՝ զսեամաղձն
 փարատէ, և սրտի ոյժ տայ, և կենդանա
 կան հոգւոյն՝ նսաստ մատուցանէ: և
 եթէ զզուտ ոսկին ոք ընդ իւր ունի
 ցի, յապկական զօրութն իւրով ուրախ
 առնէ, և մանաւանդ կաշնուլն ՚ի բե
 րանի: և եթէ զմի ինչ անդամ այնու
 խարիցեն օգուտ բոլորովին առնէ: և
 եթէ Սիւ կազմեալ ՚ի յոսկւոյ, այնու
 ծարիր ՚ի յաջս քարշիցեն, օգուտ առ
 նէ, և յոյժ շահ ունի: և ՚ի նմանէ ոսկւոյ
 Ագլիմիա գոյացեալ լինի, որ ՚ի դեղո
 րայս աչաց մեծապէս յառաջագահ է և
 պատուական և հազունագիւտ, և
 երբէք սլ դեղ ոչ է տեղակալ նմին.
 և լեսեալ ոսկին բազում ախտից կարի

օգտակար է. և զուտ ոսկի այն է զոր ո՛ր
 չափ 'ի հուրն տարցեն պակասուի ո՛չ
 արասցէ. և զայն Ս Է՛րբ տւի կոչեն. և
 'ի յոսկին օգուտ բազում է. և զյառ
 կուիս նորին բարերարն ՄԺ կատարել
 կարողութեն իւրով՝ յարգոյ և պատուա
 կան արարեալ է, և 'ի սոյն պատճառ
 նմա խառնուած իմն պարգևեալ է, զի
 ապականութիւն 'ի կերպարան նորին ճա
 նապարհ ո՛չ գտանիցէ. մինչ զի զանազան
 ազգ ըստ սովորուե ծիսի իւրոյ, անտի
 դրամ տազազարկ կազմեալ է. և ոմանք
 պարզապէս անտիպ ոսկի, ըստ որում 'ի
 թիւրքիսթանի մանրուք ոսկի անտպա
 զարկ, որք և զկշիռ ծանրուե հինգ հա
 ըիւր մագալի նորին, մի Պալէշ կոչեն:
 և 'ի հինտիսթան թիւրքիսթանի են 'ի հան
 տեղեքն որք 'ի թիւրքիսթանի են 'ի հան
 քաց ոսկւոյ, անդէն մեծամեծ ջուրք
 ընթանան, զմորթս ոչխարաց 'ի մեծա
 մեծ քարինս կապեն, և 'ի նոյն ջուրսն
 ընկղմեն՝ մանր ոսկեփոշիք 'ի բուրդս
 այն մորթոցն կաչին. և այսու կերպիւ
 շատ ոսկի գոյացուցանեն: Եւ զոմանս

աւագս՝ որք ՚ի մէջ ջրոյ լինին, լուսնան
 և զոսկիսն ՚ի նմանէ ՚ի դուրս բերեն,
 և զհողն մաղեն և յոմանս ՚ի մատենից
 ՚ի գարեհատ չափոյ, մինչ ՚ի ծանրութի
 միոյ տանկի ոսկի դտանեն. և ոսկին
 ընտիր է գերքան զամ տեսակս եօթանց
 հրահաղելեաց և լաւագոյն քան զամ
 տեսակս ճէվահիրաց: Ալ եթէ զծծուս
 բըն ՚ի վր հաղեալ ոսկւոյ ձգիցեն, կակ
 դանոյ. և գոյն իւր աւելի լինի. և ոսկին
 զոր արուեստին կազմեն՝ ՚ի խէլ
 սէնչ ելանէ. և ճշմարտապէս ոսկի սէ
 է, այլ ոսկենման է, թէպէտ քիմիա
 գործք պնտեն թէ ոսկի կազմեմք, որ
 ՚ի խելասէ ՚ի դուրս ելանէ, բայց խօսքս
 այս ՚ի ճշմարտութի կշիռ սէ ունի: Ալ
 յաւանակեան Պղինձն յոյժ նմանի ոսկ
 ւոյ, զոր մինչև տարեալ իցեն ՚ի հուր,
 ՚ի յոսկւոյ սէ կարասցեն որոշել. քանզի
 մինչ ՚ի փորձաքորն հարկանեն՝ մերձ ՚ի
 չորս տանկ այար ունի, այլ ՚ի հուրն
 սեանոյ. և զոսկին ՚ի Միւֆէռոսիս
 և ՚ի Մաճուսն ՚ի գործ ածեն, և քոր
 ման աչաց օդուս ունի, և Մաճուսն

զորս 'ի նմանէ առնեն' մարութ և լա-
երեւին :

Յարագո Ռբակո-Յեան ԼԼ բժամեայ , և յարիւս
Իեան նարս :

Գլխի , և :

Արծաթն է ճէվճէր իմն հռչակեալ
և ծանուցեալ , և է մի 'ի բովան
դակ եօթանց հրահալելեաց . որոյ բնու
թիւն ցուրտ և չոր է և վայելուչ է . և
ովանք 'ի բժշկաց յայնմ են' թէ բարե
խառն է . և այս այնպէս՝ զի բազում
հանքք 'ի Չերմային երկրի են , այլ
Սառեղք հանքաց արծաթոյ ըստ մեծի
մասին 'ի ջրասային երկրի , և այն է առա
ւելադոյն և լաւադոյն 'ի տեսակսն
արծաթոյ : Ալ զիւղումն արծաթոյ՝ ոչ
է այնքան , որքան է ոսկւոյն . և միջնոր
դութի գեղորեից այրի և ոչինչ լինի .
նաև 'ի գետնի անցմամբ ժամանակի
փափ և մոխիր լինի : Ալ 'ի Սառեղից
արծաթոյ՝ 'ի յոմանս , միջնորդութի ար
ծաթոյ զուտ սնդիկ առնեն . և 'ի պա
հու հալման մինչ 'ի յարծաթն ծծումբ
արկանեն , զկերայարան նր ապականէ :

Յատկութի նորին այն է, զի ՚ի Մաճու
 նըս և ՚ի Սիւֆէռուիճս ՚ի գործ ա
 ծեն: Ի դեզորոյս աչաց յոյժ օգտա
 կար է, և սրտի ոյժ տայ, և զբազմութի
 խոնաւութի փարատէ, և զՊէրդէմն հա
 տանէ. և մինչ յայլ դեզորոյս խառնի
 ցեն, քորման օգուտ ունի. և ընդ այլոց
 դեզորէից բաղադրել՝ զՏօան բերանոյ
 լաւացուցանէ, և միզարդելութի օգտէ:
 և ՚ի նմանէ Եդիսմիայի Քրդզի գոյացու
 ցանեն. և Մաճունքն՝ զորս յայնմանէ
 կազմեն՝ մաքուր երևին:

Յազագո յարկութեան Պղնճոյ:

Կւտի, ՀԼ.

Եւ այն տեսակս ունի, որոյ մի տե
 սակն զուտ է և պայծառ կարմիր,
 որ ՚ի դեղնութի հարկանէ և լաւագոյնն
 տեսակաց պղնճոյ այն է, որ կարմիր և
 կակուղ իցէ. և այլ իմն տեսակ կարմիր
 սևագոյն. և զայն տեսակն լաւ ոչ ա
 սեն: Լա Տէճնէն ՚ի հանքս պղնճոյ ար
 տադրի: Լա եթէ զԹուրթիայն ՚ի պը
 դինձն ձգեսցեն, համագոյն ոսկեոյ լի
 նի, և այն է Պիրնճն (որ է Լ. րոյլ) յոր

ԺԼ.

176

Ժ

մէ կերտեն անօթա: Աւ եթէ զպղծն
հալեցեն, և ջափ մի անագ 'ի վր' նր'
արկանիցեն 'ի գոյն արծաթոյ լինի, և
այն է Աբելարա: և զայրած պղնձն 'ի
սպեղանիս և 'ի ներկս 'ի գործ ածեն.
և գործ իքն որով լինամ առնեն Անա
գի և այլոց, զայն ևս 'ի պղնձոյ առնեն.
այնու պատճառաւ զի երբէք այլ իր
զլերմութիւն փութագոյն քան զայն ո՛չ
ընդունի, և անագան յինքենէ ո՛չ 'ի բաց
թողու. և 'ի պղնձոյ 'ի պահու հալեց
ման յաւելու՛ածք, 'ի վեր ելանէ, զոր
թառապալ կոչեն, և այն է 'ի բովանդակ
դեղորէից:

Յատկութիւն որին այն է որ 'ի գոյն տալն
'ի գործ ածի, և 'ի նմա բազում օգուաք
գոն. և 'ի պղնձոյ 'ի ձեռն սուր դեղոց
Վալիգուն կազմեն, և վերն զոր այնու
առնեն ո՛չ լաւանոյ. և մազն զոր Վա
լիգուն մաղխլաւ փրթուցանեն, այլ
ո՛չ բուսանի. և յատկութիւն նր' այն է, զի
'ի սպեղանիս եղեալ՝ զհին խոցս 'ի լա
ւութի ածէ: և Վասուր և Պասուր
ախտի՝ օգուտ լինի: և եթէ հայելն մի

առնիցեն 'ի պղնձոյ . և ունօղն ախտի
 Լ ազվէին' 'ի տան յորում լոյս արևու
 ճնանկանի' 'ի նա հայեացի , բժշկութի
 դացի : Եւ եթէ զայրած պղնձն լեսել
 'ի Սալաքարի , նօթի գոլով 'ի քիմն ու
 թուք օժիցեն' փսխեցուցանի . և թառ
 պալն պղնձոյ' ատամանց ճիւղայ տայ : 'Ի
 լեառն էլմութ' մի կուտոր պղնձ գտել
 են ծանրութեմ ճաղոյն կշռոյ' հինգ
 լիտր . և այս է 'ի բովանդակ հազուն
 գիւտից անտի :

Զազաթս Արախո-Ռեան սեւակացն և Հնաթի .
 Վաշուի , ճի' :

Լ նագն , զոր գալոյ ասեն . և է Սա
 տէն նորին յերկուս տեղն 'ի
 սահմանս Քռանկաց , և Պուլղարաց .
 և լաւագոյնն տեսակաց այն է , որ սպի
 տակ լինի և վճիտ , և զայն նման օժից
 կազմեալ են :

Եւ այլ տեսակ իմն' որ ճիյնի ապի , և
 սակաւամասնեոյ սևութի ունի , և չոր
 լինի . որոյ նշանն այն է , զոր մինչ շար
 ժիցես' ձայն առնի . և զանագն արուեստ

տի՛ն կիր առնեն յոյժ սպիտակ, և այնմ
Սեփեյտե՛ի զհնան ասեն, ՚յ սպիտակ
կանանց. որք զերեսս այնու սպիտակ
և պոյծ առ առնեն:

Եւ սացեալ են թէ անաղն յաղգէ
արծաթոյ է, սակայն երեք պատճառ պա
տահէլ է նմա ՚ի Սատէնի՝ Ասկղուի,
գարշահոտուի, և ճարճատու մն ՚ի ծուե
լըն. և հետևողք Աքսիրական արու՛ես
տին դատաբանեալ պնտեն թէ յոյս է
լինց արկածից՝ իւրաքանչիւրն կարելի
է յանագէ ՚ի բաց տանիլ, որ թէ հնար
լինիցի, արծաթ արու՛եստի՛ն լինի:

Յատկուի նորին: Օ սպիտակուին է
րեսաց մաքուր առնէ, և զնշանան տա
նի: Եւ եթէ դք՝ որում ցանկականն
բազում նեղուի տոյ. զանագն տախ
րակէլ ՚ի վայր կոյս քամակին կապիցէ,
ցանկուի նր պակասի. և զբազում երա
զական սերմնահոտուինս յետս դարձու
ցանէ. և ՚ի մէջ սպեղանեաց դնեն, խո
ցից օգուտ ունի: Վնուի նր ցուրտ և
չոր է. և զթորումն արեան ՚ի վերաց
յետս դարձուցանէ. և ՚ի տեղոջէ իմէ

քէ, մինչ մազ փրթուցանել կամիցին,
այնու գիւրաւ քարշեացեն:

Յաշտո Որակո՛ւք կապարի, որ է լաւորդ .
և յապիտութեան նորա:

Գլուխ, ՀԳ:

Լա Սատէն նորին է ՚ի բազում
տեղիս . և ոչ ունի յարդ ինչ . և
քան զանադն սևադոյն է, և ինթուլ
հալի: Թաութիայն ևս ՚ի հանքս կապա-
րի արտադրի ՚ի գոլորշեաց կապարի . և
մինչ զկապարն օյրեն, ՚ի նմանէ Սիփիյ
տէ կազմեն, ՚ի գոյնս և ՚ի սպեղանիս և
՚ի դեղորայս աչաց ՚ի գործ ածեն . և
եթէ զհուրն աւելի առնիցեն՝ կարմիր
լինի . և այնմ Սարինձ ասեն . և ՚ի ծաղ
կարարաց ՚ի կիր արկանի: Լա Սիւր
տարսէնկն ևս ՚ի կապարէ յառաջ գայ .
և բուն սկիզբն Սիյնաին՝ կարմիր
Սիրինձն է, և խառնակ արծաթն,
չուս՝ ոչ կարէ լինիլ, եթէ ոչ ընկերա-
կան կցորդութի՛ կապարի: Լա եթէ
զկապարն ՚ի մէջ կոխածի խաղողոյ դնի-
ցեն, Սաֆիյտաճն յայտ ածի:

Յատկութիւն Մ. յրաճ կապարն լաւ է

խոցից, և վերաց աչաց օգուտ լինի. և
 Միւրտարսէնկին յատկութիւն այն է, որ
 որ զվերս ցամաքեցուցանէ, և հոտոյ
 անթատակի՝ եթէ քացախով եռացուցեալ՝
 օժիցեն, օգուտ ունի: և եթէ
 ուտիցեն երկիւղ սատակման լիցի: և
 եթէ զկապարն տախարակէլ ՚ի վեր խոյլե
 կապիցեն, որ ՚ի յանդամն իցէ՝ զնոյն
 հալեցուցանէ: Ալ ծուխն կապարի
 ամ զգոյարանաց մնասակար է, մանա
 ւանդ զօրութիւն լսելեաց և տեսանելից.
 որ և գօտութիւն և գողգողումն բերէ:

Յաշտոս Արակոսեան տեսակացն Արշախոյ. և
 օգուտեանց նորոս

Վերս, Տ՛ի:

Սրահալելի գոյացուեց, այլ ինչ
 օգտակարագոյն մարդկանքան զեր
 կաթն ոչ գոյ. և առանց երկաթոյ եր
 բէք գործ ինչ կամ արունեստ՝ ոչ է կա
 րելի առնել. և լաւագոյնն տեսակաց
 այն է, որ յոյժ սախտակ և կարծր իցէ:
 Ալ ՚ի յերկաթոյ արունեստին փուլատ
 կազմեն. և փուլատն ևս տեսակս ու
 նի. որոյ զմի տեսակն փէլարէք կոչեն:

և Քիչարէք այն է, որ 'ի նմա ճէվհերն
 սպիտակ իցէ . և 'ի Քիչարէքէ բազում
 այն է, որ 'ի ժամանակի գործածուե
 պատճառաւ չորուէ բեկանի, և տեսակ
 մի ևս գոյ 'ի հինաօի երկաթոյ զոր
 թուհէնա կոչեն, և ճէվհեր նորին նուրբ
 լինի: Այլ տեսակ մի ևս գոյ 'ի գաւա
 ռն ճուպէք, յորմէ սուսերս առնեն .
 և է այն երկաթ իմն յոյժ սպիտակ և
 կակուղ, այնպէս զի երկաթն 'ի ներքոյ
 հարման նորին ոչ կարիցէ դիմանալ,
 և զսուսերն նորին փաթութեն որոյ
 զթուղթ . և 'ի նմանէ ոչ թողուն զի
 վաճառեսցեն տաճկաց . և մի սուսեր
 յայնմանէ հազար եդիպտական տինար
 արժէք ունի . և 'ի սուսերի ձեք գոն՝
 զորս յաջող ոչ համարին . և այն այնպէս
 է՝ զի 'ի չափ ծայրի մատին 'ի յերեա
 սուսերին 'ի ճէվհերէ դատարկ լինի,
 և գոյն նորին սեաւ: Այլ Աւմերքէքայն
 սուսեր մի ունէր զոր հէնուն կոչելին,
 որ 'ի միջակի այն սուսերին, իբրև ըզ
 պատկեր լուսնի 'ի ճէվհերէ սուսերին
 նկարեալ գոյր:

Յատկութի երկաթոյն: Վերին երկաթ-
 Թոյ՝ ստամբքսի օգտակար է. և՛ի ջրոց
 որք է Սատէնս անցանեն չիք երբէք
 ջուր ինչ օգտակարադոյն քան զջուրն
 երկաթոյ, որ ընդ ոյն անցանէ. և ջուրն
 որ գոյացել լինի, դայն Խոսպոտի-չհասի-
 կոչեն, և՛ի դեզորոյս ՚ի գործ ածեն,
 մանաւանդ ՚ի սպեղանիս. զվէրս ցամա
 քեցուցանէ, և Պասուրի օգուտ լինի.
 և Թէ ՚ի ճիւղարիչս ՚ի կիր արկանիցեն
 Պասուրի քամոյն օգուտ ունի, և
 զգոյն երեսաց որ պատճառաւ ախտի՝
 անգուռացեալ իցէ, ՚ի լաւութի բերէ:
 Սաքրանիւ Տատիտն ևս՛ի յերկաթոյ
 գոյացել լինի, և եթէ երկաթով զխրս
 տորն ջերմացուցանեն՝ զվնաս նորին
 փարատէ, և զաւելորդ գիճութիսն ՚ի
 բաց Տերբէ:

Խարի սիջնի, և յառիտի նորս օ
 Գլուխ, Հե:

ԸՃիւղէր իմն հրահալելի ՚ի յեր-
 կիրն Չիյնու. որում Խարիչիյնի
 ևս ասեն, որ գեղնագոյն է, և խառնը
 ունաւ:

ու՛ած և գոյն նորին մերձ է 'ի կարմիր
ոսկին: և ասացեալ են թէ 'ի խելասէ
'ի գուրս ելանէ . և քան զճէվհէր ոսկ
ւոյն ծանրագոյն է . ըստ որում մինչ
զայն ոսկին որ ընդ ճէվհէրի * խառ
նել իցէ՝ հալիցեն, այն ճէվհէրն առնէ
'ի ներքոյ բութակին, և այս է գուշակ
ծանրուէ նր:

Բերեալ են թէ 'ի ժամանակի միում
կայծակն մի մեծ եկն և 'ի նոյն տեղին
ճէվհէր մի գտին կարծր իբր զսիւն մի,
և մեծ մասն յայնմանէ ընդ երկայնու
թին 'ի գետին ստորասուզել էր իբրև
սպիտակ երկաթ, ըստ որում 'ի գոյն ար
ծաթոյ մերձ է . յորմէ գաշնակս և գա
նակս կազմեցին . և միջական էր ընդ
մէջ երկաթոյ և արծաթոյ, և զնմանն
նմին շատ տեսեալ են:

Պատմութի :

Պատմեն թէ 'ի նու՛մն թագաւորքն
'Բիշի, և Պահրէյնի պայքար ու
նէին ընդ միմեանս 'ի պատճառս միոյ
երկվարի և միոյ սուսերի . և արքայն

քիչի կամեցաւ, զի զայս երկուսս յար
 քայէն Պահրէյնի առցէ. յատկութի
 երիվարին այն էր որ 'ի ջուրն չորս
 Քէրսէնկ լողալով գնայր, և ոչ խոնջէր. և
 յատկութի սուսերին այն էր, որ 'ի
 հատանելն երբէք այլ սուսեր ոչ էր
 նսման նմին: և այն այնպս էր, որ 'ի հին
 Ժամանակս կոյծակն մի եկն յայն տե
 ղին, և յոյնմ ճէվհէրէ երկու ձեռք
 սուսեր կազմեցին. և սուսերադործն
 զմին 'ի վր գետնոյ եդեալ էր, իբրև
 գիշեր էանց, բովանդակ 'ի գետինն 'ի
 վայր գնացեալ էր. և նշանն իսկ ոչ
 մնացեալ. զոր որչափ խնդիր արարել
 որոնեցին, ոչ գտին. և մինչ միւս սուսե
 րն կատարեալ կազմեցաւ, յոյժ հատու
 էր. և մերձ 'ի գիշեր արքայն Պահրէյ
 նի անցանէր, և 'ի ծառ ինչ արմաւոյ
 եհաս, և վարկուցել թէ մարդ ոք իցէ,
 զայն սուսեր 'ի նոյն արմաւենին ան
 ցոյց, և կարծեց թէ զայն ոչ է հատել.
 և գիտացեալ թէ արմաւենի է, արքայն
 յոյժ բարկացաւ, և զսուսերն զքարի
 եզարի, և կտարեցաւ և ընկէց. և 'ի

միւսուճուուր տեսին զարմուենին ,
 երկու կտոր եղեալ միով հարմամբ
 սուսերին , և պատճառաւ ծանրութե
 հարման սուսերին՝ ծառն ՚ի միասին
 կապեալ էր . և մինչ սակաւիկ հողմ դի
 պաւ՝ անկաւ . յետ ոչնորիկ զսուսերն
 զուգայարեցին բովանդակ . և զայն
 Բէլուշ անուանեցին : Եւ կարծեալ
 լինի թէ այն ճէճէրն Խարի սիյնի
 եղեալ իցէ . և իւրաքանչիւր ոք ՚ի սոյն
 բանի՝ սյլեւսյլ խօսս ասացեալ են :

Յազոփս որպէս-բէւան Է՛՛ Գէնի Չիյնի ինչէցե
